2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դարձնելուց հետո երամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չդնելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 595

<< 01 >> հունվար 2021թ. ք.Էջմիածին

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/21 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Արթուր Սեդրակի Պապոյանը /քաղաք Էջմիածին, Բաղրամյան փող., 24 շենք, բն. 3, անձնագիր AM0868051/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 30.03.2021թ. տեղեկանքների և 01.04.2021թ-ի զեկուցագրի հիման վրա, 2021 թվականի ապրիլի 01-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Արթուր Սեդրակի Պապոյանը պատշաճ ծանուցվել է /հիմք 09.04.2021թ. թիվ 1391 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արթուր Սեդրակի Պապոյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո /փոստային առաքանի AG031639018AM/ չի ներկայացրել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են Արթուր Սեդրակի Պապոյանի սեփականությունը և «Գույքահարկի մասին» ու «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով վերջինս կողմից չի կատարվել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Եսայան փող., թիվ 62/9 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով 110 039 /հարյուր տաս հազար երեսունինը/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 104 366 /հարյուր չորս հազար երեք հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ 2020թ. ապառքի գումար և 5 673 /հինգ հազար վեց հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ 2018-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Եսայան փող., թիվ 62Գ հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով 117 964 /հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 97 229 /իննսունյոթ հազար երկու հարյուր քսանինը/ ՀՀ դրամ 2020թ. ապառքի գումար և 20 735 /քսան հազար յոթ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամ 2018-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Եսայան փող., թիվ 62/9 հասցեում գտնվող 0,283հա մակերեսով հողատարածքի համար հողի հարկի գծով 34 123 /երեսունչորս հազար հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 17 676 /տասնյոթ հազար վեց հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ 2020թ. ապառքի գումար և 16 447 /տասնվեց հազար չորս հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ 2017-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

4) Էջմիածին-Մարգարա խճղ., թիվ 63/9 հասցեում գտնվող 0,0094հա մակերեսով հողատարածքի համար հողի հարկի գծով 603 /վեց հարյուր երեք/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 587 /հինգ հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ 2020թ. ապառքի գումար և 16 /տասնվեց/ ՀՀ դրամ 2020թ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

5) Էջմիածին-Մարգարա խճղ., թիվ 63/10 հասցեում գտնվող 0,0085հա մակերեսով հողատարածքի համար հողի հարկի գծով 531 /հինգ հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 517 /հինգ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ

2020թ. ապառքի գումար և 14 /տասնչորս/ ՀՀ դրամ 2020թ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածներով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Արթուր Սեդրակի Պապոյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ **263 260 /երկու հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր վաթսուն/** ՀՀ դրամ, որպես Էջմիածին համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերի գույքահարկի և հողի հարկի չվճարված գումար:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դարձնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին ծանուցելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 596

<<01>> Ապրիլ 2021թ. ք.Էջմիածին

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 5/21 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Մայիս Սուրենի Թադևոսյանը /քաղաք Էջմիածին, Շոլոխով փող., թիվ 24 տուն կամ ք. Էջմիածին, Մանուշյան փող., թիվ 24Ա տուն, անձնագիր _____/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 30.03.2021թ. տեղեկանքների և 01.04.2021թ-ի զեկուցագրի հիման վրա, 2021 թվականի ապրիլի 01-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Մայիս Սուրենի Թադևոսյանը պատշաճ ծանուցվել է /հիմք 09.04.2021թ. թիվ 1392 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մայիս Սուրենի Թադևոսյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո /փոստային առաքանի AG031638762AM և AG031639034AM/ չի ներկայացրել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ Էջմիածին համայնքի վարչական սահմաններու հասցեում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են Մայիս Սուրենի Թադևոսյանի սեփականությունը և «Գույքահարկի մասին» ու «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով վերջինս կողմից չի կատարվել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Շոլոխով փող., թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով 117 375 /հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 80 774 /ութսուն հազար յոթ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 36 601 /երեսունվեց հազար վեց հարյուր մեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Շոլոխով փող., թիվ 24 հասցեում գտնվող 0,068հա հողատարածքի համար հողի հարկի գծով 80 638 /ութսուն հազար վեց հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 55 211 /հիսունհինգ

հազար երկու հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 25 427 /քսանհինգ հազար չորս հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Էջմիածին համայնքի սահմաններում գտնվող 0.84հա մակերեսով գյուղ. նշանակության վարելահող/ հողատարածքի համար հողի հարկի գծով 153 957 /հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 85 795 /ութսունհինգ հազար յոթ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ 2014-2020թթ. ապառքի գումար և 68 162 /վաթսունութ հազար հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածներով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Մայիս Սուրենի Թադևոսյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ **351 970 /երեք հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր յոթանասուն/** ՀՀ դրամ, որպես Էջմիածին համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերի գույքահարկի և հողի հարկի չվճարված գումար, որից Շոլոխով փող., թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով 117 375 /հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 80 774 /ութսուն հազար յոթ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 36 601 /երեսունվեց հազար վեց հարյուր մեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար, Շոլոխով փող., թիվ 24 հասցեում գտնվող 0,068հա հողատարածքի համար հողի հարկի գծով 80 638 /ութսուն հազար վեց հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 55 211 /հիսունհինգ հազար երկու հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 25 427 /քսանհինգ հազար չորս հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար և Էջմիածին համայնքի սահմաններում գտնվող 0.84հա մակերեսով գյուղ. նշանակության վարելահող/ հողատարածքի համար հողի հարկի գծով 153 957 /հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 85 795 /ութսունհինգ հազար յոթ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ 2014-2020թթ. ապառքի գումար և 68 162 /վաթսունութ հազար հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 597

<<01>> նոյեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 1/21 վարչական գործը՝ գույքահարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Արմեն Ռաֆիկի Ասկարյանը / քաղաք Էջմիածին, Ղուկասյան փող., թիվ 6 տուն, անձնագիր AC0305061/, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 30.03.2021թ. տեղեկանքի և 01.04.2021թ-ի զեկուցագրի հիման վրա, 2021 թվականի ապրիլի 1-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Արմեն Ռաֆիկի Ասկարյանին ծանուցումն ուղարկվել է /հիմք 09.04.2021թ. թիվ 1387 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արմեն Ռաֆիկի Ասկարյանին ծանուցումը և իրազեկումն ուղարկվելուց հետո, վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ ք. Էջմիածին, Զվարթնոց 7Ա հասցեում գտնվող անշարժ գույքը հանդիսանում է Արմեն Ռաֆիկի Ասկարյանի սեփականությունը և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել գույքահարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝ վերոնշյալ հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով 113 653 /հարյուր տասներեք հազար վեց հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 99 204 /իննսունինը հազար երկու հարյուր չորս/ ՀՀ դրամ 2019-2020թթ. ապառքի գումար և 14 449 /տասնչորս հազար չորս հարյուր քառասունինը/ ՀՀ դրամ 2019-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք,

որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Արմեն Ռաֆիկի Ասկարյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ **113 653 /հարյուր տասներեք հազար վեց հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ,** որպես ք. Էջմիածին, Զվարթնոց 7Ա հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկ, որից 99 204 /իննսունմեկ հազար երկու հարյուր չորս/ ՀՀ դրամ 2019-2020թթ. ապառքի գումար և 14 449 /տասնչորս հազար չորս հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ 2019-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 599

« 01 » հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ-ԷՋՄԻԱԾԻՆ ՄԱՅՐՈՒՂԻ, ԹԻՎ 7/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 406 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԲԵԳԼԱՐ ԱՐՏԱՇԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31.05.2021թ. Էջմիածնի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 12 և 13 արձանագրությունների համաձայն աճուրդային եղանակով օտարվող Էջմիածին քաղաք, Երևան-Էջմիածին մայրուղի, թիվ 7/4 հասցեում գտնվող 406 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդին մասնակցել է Բեգլար Արտաշի Լալայանը և առաջարկել է աճուրդում առավելագույն գին՝ 1 803 371 /մեկ միլիոն ութ հարյուր երեք հազար երեք հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Էջմիածնի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 31.05.2021թ. թիվ 12 և 13 արձանագրությունները:

2. Էջմիածին քաղաք, Երևան-Էջմիածին մայրուղի, թիվ 7/4 հասցեում գտնվող 406 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Բեգլար Արտաշի Լալայանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 600

01 հունվար 2021թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Մանուշյան փողոցի թիվ 1/3 տան բնակիչ Աշոտ Եգնակի Վարդանյանի լիազորված անձ՝ Աղավնի Սուրիկի Պետրոսյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Էջմիածնի համայնքապետարան Աշոտ Եգնակի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 23092017-04-0051 տրված 23.09.2017թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.04.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Մանուշյան փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող 0.0323հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 59.7քմ /արտաքին 59.7քմ, ներքին 54.8քմ/ մակերեսով շինությունները /խանութ 39.9քմ ծածկ 14.9քմ/ օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մանուշյան փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող 0.0323հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 59.7քմ /արտաքին 59.7քմ, ներքին 54.8քմ/ մակերեսով շինությունները /խանութ 39.9քմ ծածկ 14.9քմ/ ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 59.7քմ /արտաքին 59.7քմ, ներքին 54.8քմ/ մակերեսով շինությունները /խանութ 39.9քմ ծածկ 14.9քմ/ օրինականացման համար սահմանված 205761 /երկու հարյուր հինգ հազար յոթ հարյուր վաթսունմեկ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 601

01 հունվարի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով ՌԴ քաղաքացի Արթուր Օնիկի Ասատրյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 30.04.2021թ. հաստատված թիվ 2720 և թիվ 2721 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/ և «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից 01.03.2021թ. կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի, Անդրանիկի թաղամասի թիվ 81 հասցեում գտնվող գույքի զբաղեցրած հողամասի 0.34 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Անդրանիկի 4-րդ թաղամաս թիվ 81 շինություններ, 0.096 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Անդրանիկի 4-րդ թաղամաս թիվ 81/1 շինություններ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 602

«02» հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմում առկա են համայնքային ծառայության թափուր պաշտոններ, իսկ դրանց համալրումը անհրաժեշտ է համայնքի լիարժեք աշխատանքային գործունեության համար

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021թ-ի հուլիսի 9-ին Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմում առկա թվով 3 /երեք/ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ, ըստ սույն որոշման հավելվածի:
2. Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:
3. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Էջմիածին համայնքի ղեկավարի
<<___>> հունիսի 2021թ.
թիվ _____ որոշմամբ

Ց Ա Ն Կ

Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների

Հ/Հ	Պաշտոն	Պաշտոնի անձնագրի ծածկագիր	Մրցույթի անցկացման ժամանակը
1.	Ինֆորմացիայի, վերլուծության և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ	3.1-16	9 հուլիսի 10:00
2.	Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի երկրորդ կարգի մասնագետ	3.3-17	9 հուլիսի 12:00
3.	Կրթության և մշակույթի բաժնի երկրորդ կարգի մասնագետ	3.3-28	9 հուլիսի 14:00

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 603

02 նոյեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից կատարված 18.09.2020թ. չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Անդրանիկի 4-րդ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.066հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 45.3քմ /45.3քմ արտաքին և 39.6քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները /տնտեսական շինություն 13.8քմ, պարիսպ 25.8քմ/ համարել Էջմիածին համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Էջմիածին քաղաքի Անդրանիկի 4-րդ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.066հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 45.3քմ /45.3քմ արտաքին և 39.6քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները /տնտեսական շինություն 13.8քմ, պարիսպ 25.8քմ/:
3. Տնտեսական շինությանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Անդրանիկի 4-րդ թաղամաս թիվ 1/3:
4. Էջմիածին քաղաքի Անդրանիկի 4-րդ թաղամասի թիվ 1/3 հասցեում գտնվող ընդհանուր՝ 45.3քմ /45.3քմ արտաքին և 39.6քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները /տնտեսական շինություն 13.8քմ, պարիսպ 25.8քմ/ և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.066հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Տիգրան Արմենի Պետոյանին:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 604

«02» հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 469-րդ, 616-րդ և 624-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Էջմիածին քաղաքային համայնքի և ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 2/60 բնակարանի բնակիչ Վալերի Օհանյանի միջև 02.05.2005թ. /սեղանամատյան 1751/ կնքված Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորչի /նախկին Կամո/ փողոցի թիվ 2 շենքի բակում գտնվող հողամասի վարձակալության պայմանագրի 16-րդ կետը և հաշվի առնելով Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկ փողոցի թիվ 9 տան բնակիչ Վալերի Օհանյանի դիմումը և այն, որ Վալերի Օհանյանի կողմից վարձավճարը վճարվել է պատշաճ և ժամանակին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Երկարաձգել 02.05.2005թ. /սեղանամատյան 1751/ կնքված Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը մինչև 2026 թվականի հունիսի 10-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2.Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)Պայմանագրի նախաբանը փոխել՝ << Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 2/60 բնակարանի բնակիչ Վալերի Օհանյանի >> բառերի փոխարեն կարդալ << Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկ փողոցի թիվ 9 տան բնակիչ Վալերի Օհանյանի>> բառերը:

2)Առաջին կետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<<Սույն պայմանագրով վարձատուն վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց նրա տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում Էջմիածին քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 2/68 հասցեում գտնվող 37 /երեսունյոթ/ քմ ընդհանուր մակերեսով հողամասը, համաձայն սույն պայմանագրի հավելվածը կազմող հողամասի հատակագծի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը>>:

3)Պայմանագրի առաջին կետի երրորդ ենթակետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Հողամասի նկարագիրը՝ Հողատարածքը գտնվում է Էջմիածին քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 2/68 հասցեով>>

4)Պայմանագրի երրորդ կետի ութերորդ ենթակետը, փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 74 000 /յոթանասունչորս հազար / դրամ:>>

5)Պայմանագրի հինգերորդ կետի տասնհինգերորդ ենթակետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Վարձակալության պայմանագրի ժամկետը սահմանվում է մինչև՝ 2026 թվականի հունիսի 10-ը:>>

3. Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Էջմիածին քաղաքային համայնքի և Վալերի Օհանյանի միջև Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 605

02 հունվար 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի, Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 9 տան բնակիչ Վալերի Օհանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Վալերի Օհանյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 1466973, տրված 04.05.2005թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 2/68 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 606

02 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22. 12. 2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 19. 04. 2021թ. տրված թիվ 1/փ-132 եզրակացությունը և Էջմիածնի քաղաքային համայնքի ավագանու 19.05.2021թ. թիվ 7 նիստի թիվ 66 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող Անդրանիկի 4-րդ թաղամասի հարևանությամբ գտնվող 04-002-0244-0002 և 04-002-0244-0003 ծածկագրերով, 0. 066հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 609

02 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռիմմա Կարսիլյանի լիազորված անձ՝ Արփինե Սուրիկի Արշակյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան Ռիմմա Կարսիլյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 06062018-04-0045 տրված 06.06.2018թ./, Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի թիվ 1/15 հասցեում գտնվող 0.027հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Հիմք ընդունելով Էջմիածնի համայնքի ավագանու 19. 05. 2021թ. թիվ 7 արտահերթ նիստի թիվ 70 որոշումը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1732-ն որոշմամբ հաստատված Էջմիածնի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի թիվ 1/15 հասցեում գտնվող 0.027հա մակերեսով հողամասը համապատասխանեցնել Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծին՝ և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 608

«02» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՀ ԵԿՄ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 17.07.2020 թ. ավագանու թիվ 7 նիստի թիվ 63 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից հունիս ամսվա համար ՀՀ ԵԿՄ Էջմիածնի տարածքային բաժանմունքին հատկացնել 50.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն: Գումարը փոխանցել ԵԿՄ ՀԿ-ի Ամերիաբանկ ՓԲԸ-ի 1570001055670100 համապատասխան հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 609

03 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 97/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐՍՊԻ ՀԻՄՔԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 06.05.2021թ. թիվ 427 որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Սարգիս Համլետի Ասատրյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 97/1 հասցեում գտնվող 6.5քմ /6.5քմ արտաքին և 6.5քմ ներքին/ մակերեսով պարսպի հիմքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.01406հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կառույցն իրականացնող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 6.5քմ /6.5քմ արտաքին և 6.5քմ ներքին/ մակերեսով պարսպի հիմքի համար 12799 /տասներկու հազար յոթ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ և 0.01406հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 624518 /վեց հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարգիս Համլետի Ասատրյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 97/1 հասցեում գտնվող 6.5քմ /6.5քմ արտաքին և 6.5քմ ներքին/ մակերեսով պարսպի հիմքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.01406հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Սարգիս Համլետի Ասատրյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 610

03 մայիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 85/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 07.05.2021թ. թիվ 431 որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Սուսաննա Փոթորիկի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 85/2 հասցեում գտնվող 3քմ /3քմ արտաքին և 3քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00934հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կառույցն իրականացնող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 3քմ /3քմ արտաքին և 3քմ ներքին/ մակերեսով պարսպի համար 5907 /հինգ հազար ինը հարյուր յոթ/ ՀՀ դրամ և 0.00934հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 414865 /չորս հարյուր տասնչորս հազար ութ հարյուր վաթսունհինգ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սուսաննա Փոթորիկի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 85/2 հասցեում գտնվող 3քմ /3քմ արտաքին և 3քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00934հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Սուսաննա Փոթորիկի Վարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 611

03 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22/63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 30.04.2021թ. թիվ 405 որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Արթուր Յուրիի Գևորգյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 22/63 հասցեում գտնվող 46.4քմ /46.4քմ արտաքին և 45.3քմ ներքին/ մակերեսով խանութը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կառույցն իրականացնող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 46.4քմ /46.4քմ արտաքին և 45.3քմ ներքին/ մակերեսով խանութի համար 967162 /ինը հարյուր վաթսունյոթ հազար հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ և 0.0048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 328047 /երեք հարյուր քսանութ հազար քառասունյոթ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արթուր Յուրիի Գևորգյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 22/63 հասցեում գտնվող 46.4քմ /46.4քմ արտաքին և 45.3քմ ներքին/ մակերեսով խանութը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Արթուր Յուրիի Գևորգյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 612

«04» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՐԻՆԱ ՌՈԲԵՐՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի 14 շենքի թիվ 51 բնակարանի բնակիչ Էդիկ Ռաֆիկի Հովհաննիսյանի 01.06.2021թ. թիվ 1602 դիմումը, Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 04.06.2021թ. թիվ 15 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի 14 շենքի թիվ 51 բնակարանի անչափահաս բնակիչ Կարինա Ռոբերտի Սիմոնյանի /ծնված՝ 09.06.2007թ., ծննդյան վկայական II –AP N 680679/ նկատմամբ ժամանակավորապես սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով երեխայի պապիկին՝ Էդիկ Ռաֆիկի Սիմոնյանին /անձնագիր՝ AT0605036/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս Կարինա Ռոբերտի Սիմոնյանի /ծնված՝ 09.06.2007թ., ծննդյան վկայական II –AP N 680679/ նկատմամբ նշանակված խնամակալ Էդիկ Ռաֆիկի Սիմոնյանի /անձնագիր՝ AT0605036/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 613

07 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20. 05. 2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին-Մարգարա խճուղու վրա գտնվող 0. 01հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 5/3:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 614

09 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՆՆԴԻ ԿԵՏԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 30.04.2021թ. թիվ 407 որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Ռազմիկ Հակոբի Աղազարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 7/1 հասցեում գտնվող 54.7քմ /54.7քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով սննդի կետը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00547հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կառույցն իրականացնող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 54.7քմ /54.7քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով սննդի կետի համար 1140167 /մեկ միլիոն հարյուր քառասուն հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ և 0.00547հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 373837 /երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռազմիկ Հակոբի Աղազարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 7/1 հասցեում գտնվող 54.7քմ /54.7քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով սննդի կետը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00547հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Ռազմիկ Հակոբի Աղազարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 615

«07» դեկտեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԱՆԱՀԻՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-36-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի Արագածի զանգված 16 շենքի 11 բնակարանի բնակիչ Սարգիս Վահրամի Սարգսյանի 10.05.2021թ. թիվ 1301 դիմումը, Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 26.05.2021 թիվ 14 նիստի արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքի Արագածի զանգված 16 շենքի 11 բնակարանի բնակիչ Անահիտ Վլադիմիրի Մաթևոսյանի /ծնված՝ 15.04.1978թ., անձնագիր՝ 007862279/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով նրա որդուն՝ Սարգիս Վահրամի Սարգսյանին /անձնագիր՝ 012784146/:
2. Հսկողություն սահմանել Անահիտ Վլադիմիրի Մաթևոսյանի /ծնված՝ 15.04.1978թ., անձնագիր՝ 007862279/ նկատմամբ նշանակված պատրոն Սարգիս Վահրամի Սարգսյանի /անձնագիր՝ 012784146/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 616

07 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՎՏՈԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Ջորջ Բայրոնի փողոցի թիվ 22 տան բնակիչ Սուսան Թորգոմի Տիգրանյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2224863 տրված 25.10.2005թ. և Էյ Էյ Էս Ըքաութինգ ՍՊԸ-ի կողմից 06.05.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող 0.00456հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Հիմք ընդունելով Էջմիածնի համայնքի ավագանու 19. 05. 2021թ. թիվ 7 արտահերթ նիստի թիվ 71 որոշումը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1732-ն որոշմամբ հաստատված Էջմիածնի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող 0.00456հա մակերեսով հողամասը համապատասխանեցնել Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծին՝ և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:
2. Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող ավտոարհեստանոցի նպատակային նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը ավտոտեխսպասարկման կետի, որը հնարավոր է առանց նախագծային փաստաթղթերի:
3. Ավտոտեխսպասարկման կետին տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Էջմիածին-Երևան մայրուղի թիվ 4/7:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 617

07 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԱՏ ՄԱԹԵՎՈՍԻ ՔԹՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Առնո Բաբաջանյան /նախկին Մ.Մաշտոցի/ փողոցի թիվ 10 տան բնակիչ Ազատ Մաթևոսի Քթրյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 25.10.2013թ. և 19.07.2017թ. հաստատված թիվ 5411 և 3632 գրանցամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի և ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 26.04.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Առնո Բաբաջանյան /նախկին Մ.Մաշտոցի/ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող 0.0458հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Առնո Բաբաջանյան /նախկին Մ.Մաշտոցի/ հասցեում գտնվող 0.0458հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Ազատ Մաթևոսի Քթրյանի /ծնված 02.12.1958թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 618

07 մայիս 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Նոր Եվդոկիա փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տան բնակիչ՝ Սուսաննա Օնիկի Մարկոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Կարինե Օնիկի Մարկոսյանին, Հասմիկ Օնիկի Մարկոսյանին և Սուսաննա Օնիկի Մարկոսյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 04.11.2017թ. հաստատված թիվ 7311, 7312 և 7313 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 43/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 619

07 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով էջմիածին քաղաքի, Չարենցի փողոցի թիվ 13 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Գարեգին Սամվելի Ներսիսյանի դիմումը իրեն պատկանող հողամասը բաժանելու մասին /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 28092020-04-0070, տրված 28.09.2020թ./ և «Զիվան Հարությունյան» ԱՁ /վկայական թիվ 0390/ կողմից 19.05.2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 47/1 հասցեում գտնվող հողամասի 0.0203 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 47/1 հողամաս, 0.0202 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 47/2 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 620

«07» հոկտեմբերի 2021թ.

ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 469-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Էջմիածնի քաղաքային համայնքի և <<Պրես Ստենդ>> ՍՊԸ-ի միջև 04.02.2014թ. /սեղանամատյան 477/ կնքված Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի 9.1-րդ կետը և <<Պրես Ստենդ>> ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Խանզադյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս, պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, շարունակել է պատշաճ և ժամանակին վճարել պայմանագրով նախատեսված վճարները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Երկարաձգել 04.02.2014թ. /սեղանամատյան 477/ կնքված Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 2/108 հասցեում գտնվող 6 /վեց/քմ ընդհանուր մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի ժամկետը մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2. Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի երկրորդ կետը փոփոխել հետևյալ կերպ՝ «Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանվում է մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը»:

2) Պայմանագրի հինգերորդ կետի 5.1. ենթակետը, փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:>>

3.Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Էջմիածին քաղաքային համայնքի և <<Պրես Ստենդ>> ՍՊԸ-ի միջև Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 621

07 հունվարի 2021թ.

ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16.02.2021Թ. ԹԻՎ 131 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 16.02.2021թ. «Ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու մասին» թիվ 131 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

առաջին մասի առաջին պարբերությունում նշված «ջերմոցը» բառերի փոխարեն կարդալ «թռչնանոցը» բառերը,

առաջին կետում նշված «ջերմոցը» բառերի փոխարեն կարդալ «թռչնանոցը» բառերը:

երկրորդ կետում նշված «ջերմոցի» բառերի փոխարեն կարդալ «թռչնանոցի» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ .ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 622

07 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Պետրոզավոդսկ փողոցի թիվ 57 տան բնակիչ Սամվել Հարությունի Հովհաննիսյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26122019-04-0011 տրված 26.12.2019թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 21.01.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 37 հասցեում գտնվող 0.0157հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 70.6քմ /արտաքին 70.6քմ, ներքին 64.4քմ/ մակերեսով շինությունները /խանութ 55.3քմ բնակելի տուն 9.1քմ/ և ինքնակամ բացված պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 37 հասցեում գտնվող 0.0157հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 70.6քմ /արտաքին 70.6քմ, ներքին 64.4քմ/ մակերեսով շինությունները /խանութ 55.3քմ բնակելի տուն 9.1քմ/ և ինքնակամ բացված պատուհանը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 70.6քմ /արտաքին 70.6քմ, ներքին 64.4քմ/ մակերեսով շինությունների /խանութ 55.3քմ բնակելի տուն 9.1քմ/ և ինքնակամ բացված պատուհանի օրինականացման համար սահմանված 307334 /երեք հարյուր յոթ հազար երեք հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 623

«07» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20Բ ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՐԵԳՆԱԶԱՆ ՍԱՀԱՐՅԱՆԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարանի և Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 20բ տան բնակչուհի Արեգնազան Սահարյանի միջև 07.11.2018թ. կնքվել է համաձայնագիր վերջինիս Հայաստանի Հանրապետության ԳԱԱ գիտության միջազգային կենտրոն հիմնարկի մագիստրատուրայի <Գրադարանային-տեղեկատվական աղբյուր> բաժնում ուսումնառության կուրսը ավարտելու համար կրթական պարգև հատկացնելու և կենտրոնն ավարտելուց հետո 5 /հինգ/ տարի անընդմեջ համայնքապետարանի ենթակայության տակ աշխատելու մասին:

Ելնելով վերոհիշյալից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածի /հոդ. 4727/ միջոցներից 50.0 հազ. դրամ փոխանցել Հայաստանի Հանրապետության ԳԱԱ գիտության միջազգային կենտրոն հիմնարկի <Հայէկոնոմբանկ> ՓԲԸ-ի 163008121663 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 624

«07» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՃԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 36 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՆԻՆԱ ՋԻՐՈՅԱՆԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարանի և Կարճիկյան փողոցի թիվ թիվ 1 շենքի թիվ 36 բնակարանի բնակչուհի Նինա Ջիրոյանի միջև 07.11.2018թ. կնքվել է համաձայնագիր վերջինիս Հայաստանի Հանրապետության ԳԱԱ գիտության միջազգային կենտրոն հիմնարկի մագիստրատուրայի <Գրադարանային-տեղեկատվական աղբյուր> բաժնում ուսումնառության կուրսը ավարտելու համար կրթական պարգև հատկացնելու և կենտրոնն ավարտելուց հետո 5 /հինգ/ տարի անընդմեջ համայնքապետարանի ենթակայության տակ աշխատելու մասին:

Ելնելով վերոհիշյալից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածի /հոդ. 4727/ միջոցներից 125.0 հազ. դրամ փոխանցել Հայաստանի Հանրապետության ԳԱԱ գիտության միջազգային կենտրոն հիմնարկի <Հայէկոնոմբանկ> ՓԲԸ-ի 163008121663 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 625

07 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Մաշտոցի փողոցի թիվ 6 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչ Հարություն Նշանի Աբգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքում գտնվող, Հարություն Նշանի Աբգարյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 03.12.2019թ. հաստատված թիվ 7528 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/ տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Սբ.Մ.Մաշտոցի փողոց թիվ 6/51 նկուղ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 626

«07» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Փոքրիկ քայլ» մանկապատանեկան հանրապետական մրցույթ-փառատոնի մասնակիցներին տեղափոխելու նպատակով ձեռք է բերվել ավտոբուսի ծառայություն: Այդ նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 20.0 հազ. դրամ փոխանցել «Էջմիածնի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ԲԲԸ-ի համապատասխան հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 627

« 09 » հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հավաքների ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցության նախագահ Գևորգ Թամամյանի իրազեկումն՝ 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակում հունիսի 15-ին ժամը 14:00-20:00 սահմաններում ընտրողների հետ հանդիպում անցկացնելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցության նախագահ Գևորգ Թամամյանի 08.06.2021թ.-ի Էջմիածնի համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունել ի գիտություն:

2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 622

08 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 16.04.2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 324/1 հասցեին հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0271հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 218.9քմ /218.9քմ արտաքին և 190.5քմ ներքին/ մակերեսով սպասարկման օբյեկտը և պարիսպը համարել էջմիածին համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 324/1 հասցեին հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0271հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 218.9քմ /218.9քմ արտաքին և 190.5քմ ներքին/ մակերեսով սպասարկման օբյեկտը և պարիսպը:
3. Սպասարկման օբյեկտին և պարիսպին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 324/2:
4. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 324/2 հասցեում գտնվող ընդհանուր՝ 218.9քմ /218.9քմ արտաքին և 190.5քմ ներքին/ մակերեսով սպասարկման օբյեկտը և պարիսպը, դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0271հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Անդրանիկ Ռուբենի Գյուլբեկյանին:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 629

09 Նոյեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ՎԼԱԴԻՄԻՐ, ՄԱՐԵՏԱ, ՎԱՐՍԻԿ, ԼԻԼԻԹ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 20/ՏՈԿՈՍ/ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ ենթակետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի Հովհաննես Շիրազի /նախկին Պիոներական/ փողոցի թիվ 54 տան բնակիչ՝ Վլադիմիր Նուրիջանի Մարգարյանի դիմումը՝ իրեն, Մարետա, Վարսիկ, Լիլիթ և Գրիգոր Մարգարյաններին պատկանող /հիմք՝ <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 16.10.2020թ. N Ամ-995 տրված արխիվային տեղեկանքը և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի/ որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 24.05.2021թ. կազմված չափագրությունը/ 0.93հա գյուղատնտեսական նշանակության հողամասից ավել օգտագործվող 0.1181հա հողամասը իրեն հատկացնելու խնդրանքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող 0.93հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահող /ծածկագիր 04-002-0205-0013/ հողամասին կից ավել օգտագործվող 0.1181հա մակերեսով հողամասը ճանաչել Վլադիմիր, Մարետա, Վարսիկ, Լիլիթ և Գրիգոր Մարգարյանների սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 630

09 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇՈՏ ՄԻՀՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 33 տան բնակիչ Աշոտ Միհրանի Հարությունյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 25.01.2010թ. հաստատված թիվ 217 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և «Սևան Թովմասյան» ԱՁ-ի/ որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 19. 04. 2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 33 հասցեում գտնվող 0. 0818հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 33 հասցեում գտնվող 0. 0818հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Աշոտ Միհրանի Հարությունյանի /ծնված 05.09.1954թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 631

09 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71 ՇԵՆՔԻ ԹԻՎ 25 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Արայիկ Մամիկոնի Մազյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական 1502370 տրված 03.05.2005թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Յուրա Եղիազարյանի կողմից 13.05.2021թ. հաստատված թիվ 2451 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 31.05.2021թ. կատարված չափագրությունը/ Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 25 բնակարանին կից ինքնակամ կառուցված 18.5քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 25 բնակարանին կից ինքնակամ կառուցված 18.5քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ինքնակամ կառուցված կցակառույցի օրինականացման համար սահմանված 12854 /տասներկու հազար ութ հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 632

« 09 » հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հավաքների ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ Անի Դավթյանի իրազեկումն՝ 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի թիվ 75 հասցեում (<<Կոմիտասի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ -ի դիմաց) հունիսի 11-ին ժամը 11:00-12:00 սահմաններում ընտրողների հետ հանդիպում-հավաք անցկացնելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ Անի Դավթյանի 09.06.2021թ.-ի Էջմիածնի համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունել ի գիտություն:

2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 633

«09» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631 – Ն որոշմամբ, քննարկելով ք. Էջմիածին, Օրջոնիկիձե 65տ հասցեի բնակիչ Մելինե Յուրիի Գուլյանի 03.06.2021թ. թիվ 1637 դիմումը, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 04.06.2021թ. թիվ 15 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն՝ Մելինե Յուրիի Գուլյանի /անձնագիր՝ AT0499328/ կողմից ք. Էջմիածին, Վ. Առաջին փողոցի 47 շենքի թիվ 54 բնակարանի ձեռքբերման և գրավադրման համար, որի համասեփականատեր են հանդիսանալու վերջինիս ամուսինը՝ Վարգամ Խաչատուրի Հովհաննիսյանը /անձնագիր՝ AT0238914/, նրանց անչափահաս երեխաներ՝ Խաչատուր Վարգամի Հովհաննիսյանը /ծնված՝ 22.06.2015թ., ծննդյան վկայական ԱԲ402276/ և Ալեքս Վարգամի Հովհաննիսյանը /ծնված՝ 18.01.2018թ. ծննդյան վկայական ԱԲ611932/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ՝ Խաչատուր Վարգամի Հովհաննիսյանի /ծնված՝ 22.06.2015թ., ծննդյան վկայական ԱԲ402276/ և Ալեքս Վարգամի Հովհաննիսյանի /ծնված՝ 18.01.2018թ. ծննդյան վկայական ԱԲ611932/ ծնողներ՝ Վարգամ Խաչատուրի Հովհաննիսյանի /անձնագիր՝ AT0238914/ և Մելինե Յուրիի Գուլյանի /անձնագիր՝ AT0499328/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 634

09 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի Զվարթնոց թիվ 3 շենքի թիվ 8 բնակարանի բնակիչ Ռաֆիկ Զաքարի Փաթաթանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Ռաֆիկ Զաքարի Փաթաթանյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 2323025, տրված 23.01.2007թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Արագածի զանգված թիվ 1/84 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 635

09 նոյեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով ՌԴ քաղաքացի Արթուր Վանուշի Միրանյանի լիազորված անձ՝ Արտաշես Ռադիկի Շահնազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արթուր Միրանյանին պատկանող հողամասին /հիմք՝ վկայական 2318037, տրված 12.02.2007թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենցի 2-րդ թաղամաս թիվ 72 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 636

09 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 05. 03. 2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի համայնքի սեփականություն հանդիսացող Սոս Մանուկյան փողոցի թիվ 1-ին փակուղու թիվ 11 հասցեին կից գտնվող 0. 00089հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սոս Մանուկյան փողոց թիվ 1-ին փակուղի թիվ 11/3:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 637

09 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՋԻԹ ԱԶՈՅԻ ՍՆՋՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մաջիթ Ազոյի Սնջոյանի լիազորված անձ՝ Վարդան Բագրատի Բաղրամյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ <<Հայաստանի ազգային արխիվի>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 07.04.2021թ. թիվ ԱՄ-297 արխիվային քաղվածքը և «Սևան Թովմասյանի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 08.04.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի /նախկին Կոլխոզային/ փողոցում գտնվող 0.0497հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի /նախկին Կոլխոզային/ փողոցում գտնվող 0.0497հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Մաջիթ Ազոյի Սնջոյանի /ծնված 30.04.1959թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե ք. Էջմիածին Անդրանիկի 4-րդ թաղամաս թիվ 9:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 638

09 մայիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 04. 05. 2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցի 1-ին թաղամասի թիվ 817 հասցեին հարակից գտնվող 0. 0217հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 817/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 639

09 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 14. 05. 2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 1/2 հասցեում գտնվող ռեստորանին կից, համայնքի սեփականություն հանդիսացող 0.00813հա մակերեսով /ծածկագիր 04-002-0903-/ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հողամասին տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Շահումյան փողոց թիվ 1/3:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 640

09 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Սունդուկյան փողոցի թիվ 20ա տան բնակիչ՝ Արմանուշ Վասիլի Թորոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արմանուշ Վասիլի Թորոսյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 2839252, տրված 09.12.2011թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սունդուկյան փողոց թիվ 20/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 641

09 ապրիլի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.04.2021Թ. ԹԻՎ 402 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 29.04.2021թ. «*Ինքնակամ* կառուցված բնակելի տունը, օժանդակ շինությունները և ինքնակամ բացված պատուհանը օրինականացնելու մասին» թիվ 402 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

վերնագրում նշված «պատուհանը» բառերի փոխարեն կարդալ «պատուհանները»:

առաջին մասի առաջին պարբերությունում նշված «պատուհանը» բառերի փոխարեն կարդալ «պատուհանները» բառերը,

առաջին կետում նշված «դուռը» բառերի փոխարեն կարդալ «պատուհանները» բառերը:

երկրորդ կետում նշված «դռան» բառերի փոխարեն կարդալ «պատուհանների» բառերը և նույն կետում նշված 190856 /հարյուր ինսուն հազար ութ հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ բառերի փոխարեն կարդալ 194202 /հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր երկու/ ՀՀ դրամ» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 642

10 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով ՌԴ քաղաքացի Արա Գեորգիի Գրիգորյանի լիազորված անձ՝ էդվարդ Լևոնի Ափոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արա Գեորգիի Գրիգորյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյանի կողմից 25.05.2021թ. հաստատված թիվ 2705 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոցի փողոց թիվ 71/34 առևտրի սրահ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 893

10 նոյեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՋԻԿ ԽԱՉԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Քաջիկ Խաչիկի Գալստյանի լիազորված անձ՝ Սամվել Նշանի Գալստյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանի կողմից 09.09.2020թ. հաստատված թիվ 3390 և 3391 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 04. 03. 2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 0. 1007հա /որից 0. 055 ընդհանուր համատեղ սեփականություն/ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 0. 1007հա / որից 0. 055 մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն/ փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Քաջիկ Խաչիկի Գալստյանի /ծնված 03. 02. 1965թ. / սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 644

10 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ,
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՐԻԿ, ԱՐՇԱՎԻՐ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՂՎԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 5 տան բնակիչ Արշավիր Աղվանի Ասլանյանի լիազորված անձ՝ Գոռ Գագիկի Ասլանյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 26.04.2014թ. հաստատված թիվ 2141 և 2142 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 29. 04. 2021թ. կատարված չափագրությունը, Էջմիածին քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում են Գարիկ, Արշավիր և Գագիկ Աղվանի Ասլանյաններին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0. 132հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0. 0069հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0. 0069հա մակերեսով հողամասը համարել Գարիկ /ծնված 13.09.1966թ./, Արշավիր /ծնված 24.12.1971թ./ և Գագիկ /ծնված 14.10.1962թ./ Աղվանի Ասլանյանների սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 645

«10» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹՎՈՎ 10 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարան են դիմել թվով 10 քաղաքացիներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 22.03.2019 թ. ավագանու թիվ 4 նիստի թիվ 38 որոշման հավելվածի 5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Էջմիածին քաղաքի թվով 10 քաղաքացիների հատկացնել 630 000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 646

« 14 » հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հավաքների ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի, 22-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով <<Հայաստան>> դաշինքի լիազոր ներկայացուցիչ՝ Արամ Պողոսի Վարդեվանյանի իրազեկումն՝ 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի թիվ 75 հասցեում (<<Կոմիտասի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ -ի դիմաց) հունիսի 14-ին ժամը 12:00-14:30 սահմաններում համայնքի բնակիչների և դաշինքի ակտիվի հետ շտապ հավաք, բացօթյա հանդիպում անցկացնելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Հայաստան>> դաշինքի լիազոր ներկայացուցիչ՝ Արամ Պողոսի Վարդեվանյանի իրազեկումն՝ շտապ հավաք անցկացնելու վերաբերյալ, ընդունել ի գիտություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 647

14 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07.06.2021թ. ԹԻՎ 617 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 07.06.2021թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները Ազատ Մաթևոսի Քթրյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 617 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

առաջին կետում նշված «Առնո Բաբաջանյան /նախկին Մ.Մաշտոցի» բառերից հետո լրացնել «փողոցի թիվ 10» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 648

«14» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631 – Ն որոշմամբ, քննարկելով ք. Էջմիածին, Կամո 2ա շենքի 44 բնակարանի բնակիչ Մերի Արթուրի Բեգլարյանի /անձնագիր՝ AR0496075/ 11.06.2021թ. թիվ 1742 դիմումը, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 14.06.2021թ. թիվ 16 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն՝ Մերի Արթուրի Բեգլարյանի /անձնագիր՝ AR0496075/ կողմից ք. Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացի փողոց 101/1 շենքի 104 բնակարանը օտարելու համար, որի համասեփականատեր են վերջինիս անչափահաս երեխաներ՝ Էլվինա Էդգարի Հովհաննիսյանը /ծնված՝ 10.10.2010թ., ծննդյան վկայական ԱԲ097505/, Սուսաննա Էդգարի Հովհաննիսյանը /ծնված՝ 02.11.2011թ., ծննդյան վկայական ԱԲ160455/ և Էդիկ Էդգարի Հովհաննիսյանը /ծնված՝ 13.12.2018թ. ծննդյան վկայական ԲԱ062360/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ՝ Էլվինա Էդգարի Հովհաննիսյանի /ծնված՝ 10.10.2010թ., ծննդյան վկայական ԱԲ097505/, Սուսաննա Էդգարի Հովհաննիսյանի /ծնված՝ 02.11.2011թ., ծննդյան վկայական ԱԲ160455/ և Էդիկ Էդգարի Հովհաննիսյանի /ծնված՝ 13.12.2018թ. ծննդյան վկայական ԲԱ062360/ ծնող՝ Մերի Արթուրի Բեգլարյանի /անձնագիր՝ AR0496075/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 649

14 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Ռիմա Սերյոժայի Պետրոսյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 737011 տրված 20.08.2002թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.04.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Սոս Մանուկյան /նախկին Կնունյանց/ փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.0048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 96քմ /արտաքին 96քմ, ներքին 78.5քմ/ մակերեսով շինությունները /խանութ 18.3քմ, վարսավիրանոց 17.3քմ, բնակելի տուն 42.9քմ/ օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սոս Մանուկյան /նախկին Կնունյանց/ փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.0048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 96քմ /արտաքին 96քմ, ներքին 78.5քմ/ մակերեսով շինությունները /խանութ 18.3քմ, վարսավիրանոց 17.3քմ, բնակելի տուն 42.9քմ/ ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 96քմ /արտաքին 96քմ, ներքին 78.5քմ/ մակերեսով շինությունները /խանութ 18.3քմ, վարսավիրանոց 17.3քմ, բնակելի տուն 42.9քմ/ օրինականացման համար սահմանված 268966 /երկու հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Սոս Մանուկյան թիվ 29/2:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 650

14 հունվարի 2021թ.

ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՇԵՆՔԻ ԹԻՎ 64 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կրոմվել Ալեքսեյի Գրիգորյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 15122020-04-0068 տրված 25.12.2020թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17. 05. 2020թ. կատարված չափագրությունը/ Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ /նախկին Կամոյի/ փողոցի թիվ 4 շենքի թիվ 64 հասարակական շինությանը կից ինքնակամ կառուցված 20. 3քմ մակերեսով կցակառույցի և թվով 2 դռան օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ /նախկին Կամոյի/ փողոցի թիվ 4 շենքի թիվ 64 հասարակական շինությանը կից ինքնակամ կառուցված 20. 3քմ մակերեսով կցակառույցը և թվով 2 դուռը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ինքնակամ կառուցված 20. 3քմ մակերեսով կցակառույցի և թվով 2 դռան օրինականացման համար սահմանված 18737 /տասնութ հազար յոթ հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 672

«15» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախ-Ադերբեջանական սահմանին տեղի ունեցած մարտերի ժամանակ զոհվել է Սամվել Ղազարյանը:

Հոգեհանգիստի համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 35.0 հազ. դրամ փոխանցել ա/ծ Գայանե Հարությունյանի համապատասխան հաշվեհամարին՝ ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 673

«15» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝ բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածը /հոդ. 4269/ 10000.0 հազ. դրամ:
2. Ավելացնել՝ աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Տրանսպորտային նյութեր> հոդվածը /հոդ. 4264/ 10000.0 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 674

18 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԱՆՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 31/21 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան փողոց թիվ 8 շենքի հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ, **պարզեց որ**

Հրանտ Անդրանիկի Գրիգորյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենք, թիվ 40 բնակարան, անձնագիր՝ AM0788427, տրված 04.07.2012թ-ին, 001-ի կողմից), համայնքային սեփականություն հանդիսացող, Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 21.04.2021թ. կազմված թիվ 9 արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2021 թվականի ապրիլի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում, որին Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում, Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված շինության կապակցությամբ 21.04.2021թ կազմված թիվ 9 արձանագրությունը, տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- Էջմիածին համայնքի ղեկավարի 21.04.2021թ. «Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 353 որոշումը:
- Հանձնաժողովի 13.11.2020թ. թիվ 84/20 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:
- 05.05.2021թ-ի Հրանտ Գրիգորյանի դիմումը:
- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 18.06.2021 թվականին կազմված տեղազննության ակտ:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված է համարվում հետևյալը.

Էջմիածին, Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենք, թիվ 40 բնակարանի բնակիչ Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոցի թիվ 8 շենքին հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, կատարվել է շինարարական աշխատանքներ /քարե շինություն և այլ շինարարական աշխատանքներ/ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Էջմիածին համայնքի ղեկավարը ընդունել է 21.04.2021թ. «Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 353 որոշումը, որի վերաբերյալ համապատասխան ծանուցումը առձեռն հանձնվել է Հրանտ Անդրանիկի Գրիգորյանին և ուժի մեջ է մտել վերջինիս իրազեկելուն հաջորդող օրվանից:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի ապրիլի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի ապրիլի 30-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (առձեռն) Հրանտ Անդրանիկի Գրիգորյանը;

Վերջինս ներկայանալով վարչական վարույթի լսմանը հայտարարել է, որ խնդրում է ինչպես բոլորին, այնպես էլ իրեն վարձակալության հիմունքներով, որպես ավտոտնակ օգտագործելու համար, հատկացնել նշված տարածքը և մեղմացնել տուգանքը, քանի որ թոշակառու է: Նաև հայտարարել է, որ նախկինում այդ տարածքում ունեցել է երկաթից տեղեդրված ավտոտնակ, որը հանելուց հետո վտանգներից խուսափելու և երեխաների անվտանգությունը ապահովելու նպատակով որոշել է փակել տարածքը քարե շինություն կառուցելով:

Հրանտ Անդրանիկի Գրիգորյանին առաջարկվել է մինչև 2021թ-ի մայիսի 5 քանդել ինքնակամ շինությունը և տարածքը բերել նախկին տեսքի:

2021թ-ի մայիսի 5-ին Հրանտ Անդրանիկի Գրիգորյանը դիմում է ներկայացրել համայնքապետարան խնդրելով երկարաձգել ինքնակամ շինության քանդման համար տրված ժամանակահատվածը մինչև մայիսի 15-ը:

18.06.2021թ. Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Գոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում կատարվել է տեղազննություն, որի ընթացքում պարզվել է, որ Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից շինարարական աշխատանքները դադարեցվել են, վերացվել է շինարարական աղբը, սակայն ինքնակամ շինությունը չի քանդվել և տարածքը նախկին տեսքի չի բերվել:

Այսպիսով գտնում եմ, որ ապացուցված է այն փաստը, որ է Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված իրավախախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Այսինքն շինարարությունն ինքնակամ (ապօրինի) (այսուհետ՝ ապօրինի) է համարվում, եթե՝

1) կառուցվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, կամ

2) կառուցվում է առանց թույլտվության, կամ

3) կառուցվում է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

Նշված 3 պայմաններից մեկի առկայությունն արդեն իսկ բավարար է իրականացվող շինարարությունը կամ կառուցված շինությունն ինքնակամ (ապօրինի) համարելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ <u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տվյալ պարագայում Հրանտ Անդրանիկի Գրիգորյանը համայնքային սեփականություն հանդիսացող, Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի նկատմամբ նշանակել տուգանք 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2. Նախազգուշացնել Հրանտ Անդրանիկի Գրիգորյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները, ապա համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

3. Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան (նախկին՝ Վ. Կոստանյան) փողոց թիվ 8 շենքի հարակից տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում Հրանտ Անդրանիկի Գրիգորյանի կողմից կառուցված ինքնակամ կառույցը քանդել:

4.Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը, քանդել ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 4-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

6. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 4-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, էջմիածին քաղաքի Արարատյան փողոց թիվ 21 տան դիմաց համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու և դրա հետևանքները վերացնելու ու դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Խաչատուր Հարությունյանից:

7. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

8. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 682

23 հունվար 2021թ.

ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդկետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15. 12. 2020թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 71 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 71 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0. 0746 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 683

23 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՑՅ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից կատարված 20.05.2021թ. չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տանը հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0583հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը համարել էջմիածին համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տանը հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0583հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը:
3. Կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թումանյան փողոց թիվ 63/2:
4. Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 63/2 հասցեում գտնվող 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0583հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Կարեն Ժիրայրի Մարգարյանին:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 684

23 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի թիվ 160 բ տան բնակիչ Լևոն Գրիգորի Աղվինյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Լևոն Գրիգորի Աղվինյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 2379681, տրված 05.05.2010թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Բաղրամյան փողոց թիվ 4/7 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 685

23 մայիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՇՎԱՐԿԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 41/21 վարչական գործը՝ «ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից գույքահարկի կիսամյակային հաշվարկը տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու մասին, **պարզեց որ**

«ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն (հասցեն՝ ՀՀ, Մանուկյան թղմ., թիվ 275 տուն, Պետ. ռեգիստրի գրանցման համար 99.110-1085618 / 2019-08-01, ՀՎՀՀ՝ 04432385) հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող/գրանցված/ գույքի սեփականատեր՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, գույքահարկ վճարող սուբյեկտ, խախտելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել 2020թ-ի 2-րդ կիսամյակի գույքահարկի հաշվարկը, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանք, ինչի կապակցությամբ 2021 թվականի մայիսի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

«ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է /հիմք 20.05.2021թ. թիվ 2086 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել օրենքով սահմանված պարտականությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, չի ներկայացրել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն հանդիսանալով Էջմիածին քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող /գրանցված/ գույքի սեփականատեր, հիմք ընդունելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել գույքահարկի հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը</u>.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Տվյալ պարագայում «ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ -ի կողմից կողմից Էջմիածնի համայնքապետարան չի ներկայացվել գույքահարկի հաշվետվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԴԻԷՅՉ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ -ից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, որպես գույքահարկի 2020թ-ի 2-րդ կիսամյակի հաշվարկը տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 686

23. հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.02.2021Թ. ԹԻՎ 176 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 26.02.2021թ. «Բնակարանի գործառնական նշանակությունը և օգտագործման նպատակը փոփոխելու մասին» թիվ 176 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   առաջին մասի առաջին պարբերությունում նշված «խանութի» բառերի փոխարեն կարդալ «գեղեցկության սրահի» բառերը,

   առաջին կետում նշված «խանութի» բառերի փոխարեն կարդալ «գեղեցկության սրահի» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 687

23 հոկտեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՎՈՎ 6 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արա Սիրեկանի Կյուրեղյանի լիազորված անձ՝ Արմեն Արաի Կյուրեղյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Էջմիածնի համայնքապետարան Արա Սիրեկանի Կյուրեղյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 737696 տրված 11.02.2003թ. և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 05.05.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 8ա հասցեում գտնվող 0.0834հա /որից 0.0069հա ընդհանուր բաժնային սեփականություն/ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 7քմ /արտաքին 7քմ, ներքին 7քմ/ մակերեսով աստիճանը և թվով 6 պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 8ա հասցեում գտնվող 0.0834հա /որից 0.0069հա ընդհանուր բաժնային սեփականություն/ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ 7քմ /արտաքին 7քմ, ներքին 7քմ/ մակերեսով աստիճանը և թվով 6 պատուհանը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 7քմ /արտաքին 7քմ, ներքին 7քմ/ մակերեսով աստիճանի և թվով 6 պատուհանի օրինականացման համար սահմանված 35425 /երեսունհինգ հազար չորս հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Բաղրամյան փողոց թիվ 8/1:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին հրապարակելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 688

23 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅԻՍ ՍՈՒՐԵՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Պատկանյան փողոցի թիվ 46 տան բնակիչ Մայիս Սուրենի Թադևոսյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 27.10.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 27.08.2015թ. հաստատված թիվ 4047 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 02.06.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Պատկանյան փողոցի թիվ 46 հասցեում գտնվող 0.0392հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Պատկանյան փողոցի թիվ 46 հասցեում գտնվող 0.0392հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Մայիս Սուրենի Թադևոսյանի /ծնված 21.05.1957թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 689

23 հունվարի 2021թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱԿՈԲԻ ԱՆԱՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 49 տան բնակիչ Արշալույս Հակոբի Անանասյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանի կողմից 09.06.2021թ. հաստատված թիվ 2964 և 2965 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 03.03.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 49 հասցեում գտնվող 0.0831հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 49 հասցեում գտնվող 0.0831հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Արշալույս Հակոբի Անանասյանի /ծնված 10.12.1965թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 690

23 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի, Հալաբյան փողոցի թիվ 17 շենքի թիվ 22 բնակարանի բնակիչ՝ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Երևան քաղաքի նոտարական տարածքի նոտար Աննա Լևոնի Ղազարյանի կողմից 01.06.2021թ. վավերացված թիվ 3828 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թորամանյան փողոց 2/3 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 691

23 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով ՌԴ քաղաքացի՝ Հովհաննես Համլետի Մինասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հովհաննես Համլետի Մինասյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 18.06.2021թ. վավերացված թիվ 3123 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թումանյան փողոց թիվ 27/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 692

24 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐԵՆ ԵՓՐԵՄԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 39/21 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 բազմաբնակարան շենքին կից համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքում Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի կողմից առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու մասին, **պարզեց, որ**

Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանը (ք. Էջմիածին, Չարենցի փող.,թիվ 13 շենք, թիվ 30 բնակարան, անձնագիր՝ AT 0516122, տրված 06.07.2020թ-ին 057-ի կողմից), իրեն սեփականության իրավունքով պատկանող Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքի թիվ 30 բնակարանին կից, համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 19.05.2021 թվականին կազմված թիվ 12 արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2021 թվականի մայիսի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում, Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքի թիվ 30 բնակարանին կից, ընդհանուր օգտագործման տարածքում առանց համապատասխան թույլտվության Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի կողմից կատարված ինքնակամ շինության կապակցությամբ 19.05.2021 թվականին կազմված թիվ 12 արձանագրությունը, տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- Էջմիածին համայնքի ղեկավարի 21.05.2021 թվականի «Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքին կից ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 480 որոշումը:
- Հանձնաժողովի 07.06.2021թ. թիվ 39/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:
- Սեփականության իրավունքի վկայական թիվ 057236;
- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 21.06.2021 թվականին կազմված տեղազննության ակտ:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված է համարվում հետևյալը.

Էջմիածին քաղաքի Չարենցի փող.,թիվ 13 շենք, թիվ 30 բնակարան բնակիչ Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի կողմից Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքի թիվ 30 բնակարանին կից, համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքում, իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ / շինության հիմքի համար փոսի փորում/:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Էջմիածին համայնքի ղեկավարը ընդունել է 21.05.2021 թվականի «Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքին կից ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ

480 որոշումը, որի փոստային ծառայության միջոցով հանձնվել է Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանին /հիմք փոստային անդորրագիր AG 032019706 AM/:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի մայիսի 19-ին Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 հունիսի 7-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է՝ Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանը :

Վերջիններս ներկայանալով վարչական վարույթի նիստին հայտարարեց, որ կվերացնի փորված փոսը և տարածքը կբերի նախկին տեսքի:

Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 21.06.2021 թվականին Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքի թիվ 30 բնակարանին կից հասցեով կրկին կատարված այցի ժամանակ կազմված տեղազննության ակտի համաձայն, չնայած ապօրինի շինարարությունը կասեցնելու մասին որոշման, Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանը շարունակել էր ինքնակամ շինարարական աշխատանքները առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի/ քարե պատերի կառուցում/, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Այսպիսով գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավախախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Այսինքն շինարարությունն ինքնակամ (ապօրինի) (այսուհետ՝ ապօրինի) է համարվում, եթե՝

1) կառուցվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, կամ

2) կառուցվում է առանց թույլտվության, կամ

3) կառուցվում է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

Նշված 3 պայմաններից մեկի առկայությունն արդեն իսկ բավարար է իրականացվող շինարարությունը կամ կառուցված շինությունն ինքնակամ (ապօրինի) համարելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ <u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տվյալ պարագայում Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանը համայնքային սեփականություն հանդիսացող, Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց թիվ 13 շենքի թիվ 30 բնակարանին կից տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի նկատմամբ նշանակել տուգանք **200 000 /երկու հարյուր հազար/** ՀՀ դրամ գումարի չափով՝ Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց բազմաբնակարան թիվ 13 շենքին կից, համայնքային սեփականություն հանդիսացող, ընդհանուր օգտագործման տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2.Նախազգուշացնել Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանին, որ եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո շարունակվեն շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

3. Էջմիածին քաղաքի Չարենցի փողոց բազմաբնակարան թիվ 13 շենքին կից, համայնքային սեփականություն հանդիսացող, ընդհանուր օգտագործման տարածքում Կարեն Եփրեմի Տեր-Խաչատրյանի կողմից կառուցված ինքնակամ կառույցը քանդել:

4.Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը, քանդել ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 4-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

6. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 4-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, Էջմիածին քաղաքի Արարատյան փողոց թիվ 21 տան դիմաց համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու և դրա հետևանքները վերացնելու ու դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Խաչատուր Հարությունյանից:

7. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

8. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 693

24 հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 87/6 հասցեում գտնվող, 0. 0826հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական օբյեկտների :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 694

24 նոյեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՖՐՈՒՆԶԻԿ ԼԵՎՈՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՆԱԻՐԱ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԵՎ ԿԱՄՈ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 8 տան բնակիչ Ֆրունզիկ Լևոնի Սաղաթելյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն <<Հայաստանի ազգային արխիվի>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 22.01.2021թ. թիվ Ամ-1274 արխիվային քաղվածքի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 12.04.2021թ. կատարված չափագրության, Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում է Ֆրունզիկ Լևոնի Սաղաթելյանին, Վարդանուշ Հենրիկի Վարդանյանին, Նաիրա Ֆրունզիկի Սաղաթելյանին և Կամո Ֆրունզիկի Սաղաթելյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.048հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0037հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0037հա մակերեսով հողամասը համարել Ֆրունզիկ Լևոնի Սաղաթելյանի /ծնված 25.10.1958թ./, Վարդանուշ Հենրիկի Վարդանյանի /ծնված 02.01.1959թ./, Նաիրա Ֆրունզիկի Սաղաթելյանի /ծնված 25.05.1984թ./ և Կամո Ֆրունզիկի Սաղաթելյանի /ծնված 05.01.1986թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 8:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 695

24 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի 1-ին փակուղու թիվ 2/2 տան բնակիչ՝ Սամվել Հարությունի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Սամվել Հարությունի Մանուկյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 16012014-04-0001, տրված 16.01.2014թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Նալբանդյան փողոց թիվ 2/4 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 696

24 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Իսակով փողոցի թիվ 66 տան բնակիչ Մայիս Վահանի Ամիրյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 24.01.1997թ. կնքված թիվ 2-360 սեղանամատյանով գրանցված բնակելի տան առուծախի պայմանագիրը և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 09. 06. 2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 235 հասցեում գտնվող 0. 0468 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 112.3քմ /արտաքին 112.3քմ, ներքին 89.1քմ/ մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց շինության օրինականացման մասին՝ պարզվեց, որ նշված շինությունը կառուցվել է մինչև 2001թ մայիսի 15-ը, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրեսնգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 Մայիս Վահանի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող, Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 235 հասցեում գտնվող 0. 0468 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 112.3քմ /արտաքին 112.3քմ, ներքին 89.1քմ/ մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց շինությունը ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կիսակառույց շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Անշարժ գույքին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին Ա. Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 235:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 697

«24» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷԴՈՒԱՐԴ ԳԱԳԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34 -38-րդ հոդվածներով, 41-րդ հոդվածի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով Ալինա Էդվարդի Ավետիսյանի 11.06.2021թ. թիվ 1740 դիմումը, «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2021թ. թիվ 17 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 16.02.2015թ. թիվ 38 որոշմամբ Էջմիածին համայնքի Վ. Մամիկոնյան փողոցի թիվ 45 տուն հասցեի բնակիչ անչափահաս Էդուարդ Գագիկի Ղազարյանի / ծնված՝ 04.12.2006թ., ծննդյան վկայական ԱԱ 114802/ նկատմամբ խնամակալ նշանակված Ալինա Էդվարդի Ավետիսյանի /անձնագիր՝011823408/ խնամակալությունը դադարեցնել և որոշումը ուժը կորցրած ճանաչել:
2. Անչափահաս Էդուարդ Գագիկի Ղազարյանի /ծնված՝ 04.12.2006թ., ծննդյան վկայական ԱԱ 114802/ նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով երեխայի տատիկին՝ Լուսիկ Մարտիրոսի Ավետիսյանին /անձնագիր՝ AR0252468/:
3. Հսկողություն սահմանել անչափահաս Էդուարդ Գագիկի Ղազարյանի /ծնված՝ 04.12.2006թ., ծննդյան վկայական ԱԱ 114802/ նկատմամբ նշանակված հոգաբարձու Լուսիկ Մարտիրոսի Ավետիսյանին /անձնագիր՝ AR0252468/ գործունեության նկատմամբ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 698

«24» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631 – Ն որոշմամբ, քննարկելով ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փողոցի 47 շենքի թիվ 74 բնակարանի բնակիչ Տիգրան Ջավենի Սահակյանի /անձնագիր՝ 000168609/ 21.06.2021թ. թիվ 1847 դիմումը, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2021թ. թիվ 17 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համաձայնություն տալ Տիգրան Ջավենի Սահակյանին /անձնագիր՝ 000168609/ գրավադրելու՝ իր խնամակալության ներքո գտնվող անչափահաս երեխաներ Լուսինե Տիգրանի Սահակյանի /ծնված՝20.10.2010թ., ծննդյան վկայական ԱԲ097589/, Հայկ Տիգրանի Սահակյանի /ծնված՝ 27.03.2012թ., ծննդյան վկայական ԱԲ177723/ և Անի Տիգրանի Սահակյանի /ծնված՝30.03.2020թ.ծննդյան վկայական ԲԱ238936/ անվամբ համասեփականության իրավունքով ձեռքբերվելիք ք. Էջմիածին, Վ. Առաջին փողոց 38 շենքի թիվ 30 բնակարանը:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ՝ Լուսինե Տիգրանի Սահակյանի /ծնված՝20.10.2010թ., ծննդյան վկայական ԱԲ097589/, Հայկ Տիգրանի Սահակյանի /ծնված՝ 27.03.2012թ., ծննդյան վկայական ԱԲ177723/ և Անի Տիգրանի Սահակյանի /ծնված՝30.03.2020թ.ծննդյան վկայական ԲԱ238936/ ծնողներ՝ Տիգրան Ջավենի Սահակյանի /անձնագիր՝ 000168609/ և Աննա Սամվելի Ավետիսյանի /անձնագիր՝ 006645659/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 699

24 հունիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 85Ա ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՑՅԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 85ա շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Կարեն Հումբերտի Հովհաննիսյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն և Ժուլետա Սուրիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 23062021-04-0016 տրված 23.06.2021թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.06.2021թ. կատարված չափագրությունը/ Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 85ա շենքի թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 124.2քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 85ա շենքի թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 124.2քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ինքնակամ կառուցված կցակառույցի օրինականացման համար սահմանված 73365 /յոթանասուներեք հազար երեք հարյուր վաթսունհինգ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 700

«25» հունվար 2021թ.

ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 469-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Էջմիածնի քաղաքային համայնքի և Մարի Սուրենի Հովհաննիսյանի միջև 02.12.2008թ. /սեղանամատյան 6401/ կնքված Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի 9.1-րդ կետը և Մարի Սուրենի Հովհաննիսյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս, պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, շարունակել է պատշաճ և ժամանակին վճարել պայմանագրով նախատեսված վճարները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Երկարաձգել 02.12.2008թ. /սեղանամատյան 6401/ կնքված Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա թիվ 80 հասցեում գտնվող 20 /քսան/քմ ընդհանուր մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի ժամկետը մինչև 2026 թվականի հուլիսի 01-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2. Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)Պայմանագրի առաջին մասի մեջ «անձնագիր AA0244296 տրված 01.08.1995թ. 057-ից» բառերը փոփոխել հետևյալ բառերով՝ «անձնագիր AT0527212 տրված 21.07.2020թ. 057-ից»:

2)Պայմանագրի երկրորդ կետը փոփոխել հետևյալ կերպ՝ «2.1.Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանվում է մինչև 2026 թվականի հուլիսի 01-ը»:

3)Պայմանագրի երկրորդ կետում ավելացնել նոր 2.2. ենթակետը, հետևյալ բովանդակությամբ՝ <<2.2. Կառուցապատման իրավունքի ժամկետը ավարտվելուց հետո պայմանագիրը համարվում է դադարեցված՝ ինչը հիմք է առանց կառուցապատողի լրացուցիչ համաձայնության միակողմանի դադարեցնելու պետական գրանցումը:>>:

4) Պայմանագրի հինգերորդ կետի 5.1. ենթակետը, փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:>>

3.Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Էջմիածին քաղաքային համայնքի և Մարի Սուրենի Հովհաննիսյանի միջև Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 104

25 հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 18 տան բնակիչ՝ Մարկոս Վարդանի Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Մարկոս Վարդանի Վարդանյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 14.06.2021թ. հաստատված թիվ 4064 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Խորենացու փողոց թիվ 20/27 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 202

25 հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 16 <<ՈՍՏԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 42-րդ կետերի պահանջներով, Էջմիածին քաղաքի ավագանու 22.03.2019թ. թիվ 38 որոշմամբ ընդունված կարգով, հիմք ընդունելով 2020թ. դեկտեմբերի 18-ի թիվ 12 նիստի թիվ 129 որոշումը <<2020թ. Էջմիածնի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում 2021թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին>> և թիվ 130 որոշումը <<Էջմիածնի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-մանկապարտեզներում երեխաների խնամքի համար գանձվող 2021թ. վարձավճարների>>, <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2021թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին, ինչպես նաև հաշվի առնելով Էջմիածնի համայնքապետարանի Ընդհանուր, սոցիալական և առողջապահության բաժնի ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Էջմիածնի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզ հաճախող երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 3 /երեք/ երեխաների ցանկը՝ համաձայն Կրթության և մշակույթի բաժնի պետի կողմից 25.06.2021թ. զեկուցագրին կից ներկայացված ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 703

28 հոկտեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԻՆԱԿ ԳՐԻԳՈՐԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 27 տան բնակիչ Վաղինակ Գրիգորի Եղիազարյանի լիազորված անձ՝ Անի Հովհաննեսի Հալուլյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 31. 03. 2021թ. կայացված վճռի, քաղաքացիական գործ թիվ Արդ 1/2847/02/19 և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17. 05. 2021թ. կատարված չափագրության, Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 27 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում է Վաղինակ Գրիգորի Եղիազարյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0. 07հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0. 0168հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Եկմալյան փողոցի թիվ 27 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0. 0168հա մակերեսով հողամասը համարել Վաղինակ Գրիգորի Եղիազարյանի /ծնված 03. 03.1961թ. / սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 304

«29» հունիսի 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ 4-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Էջմիածնի քաղաքային համայնքի և <<Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն>> բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի միջև 19.04.2019թ. /սեղանամատյան 3715/ կնքված տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի 3.2-րդ կետը և <<Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն>> բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կառավարիչ՝ Հաբեթնակ Միսակի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Երկարաձգել 19.04.2019թ. /սեղանամատյան 3715/ կնքված Էջմիածին քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի 0 հասցեում Էջմիածնի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտնվող տարածքների (18քմ մակերեսով /II.4/08 համարակալումով/, 35,7քմ մակերեսով /II.4/09 համարակալումով/ և 13,7քմ մակերեսով /II.4/10 համարակալումով/ ոչ բնակելի տարածքները (երեք սենյակ)) անհատույց օգտոգործման պայմանագրի ժամկետը մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2.Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի երրորդ կետի 3.1 ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Փոխատվության պայմանագրի ժամկետը սահմանվում է մինչև՝ 2024 թվականի հուլիսի 01-ը:»:

2) Պայմանագրի երրորդ կետում ավելացնել նոր 3.3. ենթակետը, հետևյալ բովանդակությամբ՝ << Սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են, եթե մինչև ժամկետի ավարտը պայմանագրի ժամկետը փոխադարձ համաձայնությամբ չի երկարաձգվում:>>:

3) Պայմանագրի վեցերորդ կետում ավելացնել նոր 6.5. ենթակետը, հետևյալ բովանդակությամբ՝ <<Սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված դեպքերում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը՝ ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա:>>:

3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

4. Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Էջմիածին քաղաքային համայնքի և <<Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն>> բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի միջև անհատույց օգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 405

«29» հունիսի 2021թ. ք. Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631 – Ն որոշմամբ, քննարկելով ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս 69 տան բնակիչ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի 28.06.2021թ. թիվ 1909 դիմումը, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 29.06.2021թ. թիվ 18 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 69 հասցեում գտնվող, Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանին /անձնագիր՝ AR0204198/ և նրա անչափահաս երեխաներ՝ Մամիկոն Արմենի Վարդանյանին /անձնագիր՝ AS0696300, ծնված՝ 01.07.2004թ /,Գայանե Արմենի Վարդանյանին /անձնագիր՝ AS0696296, ծնված՝ 22.07.2005թ/ և Անի Արմենի Վարդանյանին /անձնագիր՝ AS0696295, ծնված՝ 02.12.2008թ./ համասեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը գրավադրելու համար:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ՝ Մամիկոն Արմենի Վարդանյանի /անձնագիր՝ AS0696300/,Գայանե Արմենի Վարդանյանի /անձնագիր՝ AS0696296/ և Անի Արմենի Վարդանյանի /անձնագիր՝ AS0696295/ ծնող՝ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի /անձնագիր՝ AR0204198/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ